ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՄԵԾ ՄԱՐԴԱՍԵՐ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՏԵՍ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ս. Ս.

Գերմանացի նշանավոր գրող, հրապարակախոս, իրավագիտության դոկտոր, հումանիստ, խաղաղության պայքարի մարտիկ Արմին Թեոֆիլ Վեգները ծնվել է 1886 թ. հոկտեմբերի 16-ին Վուպերտալ-Էբերֆելդում: Ուսանել է Բեռլինի, Բրեսլաուի և Ցյուրիխի համալսարաններում: Բազմաբովանդակ է եղել նրա գործունեությունը:

Տակավին պատանի՝ հաստատակամորեն վճռում է պաշտպան կանգնել ճնշված ժողովուրդների ինքնորոշման իրավունքներին: Երբ «Բեռլիներ ցայթունգում» կարդում է «Գազանային հաշվեհարդար հայերի հետ Թուրքիայում» հոդվածը, նրանում ձևավորվում է հայապաշտպան գործունեության անհրաժեշտությունը, որը դրսևորվում է հատկապես Առաջին աշխարհամարտի տարիներին:

Այդ ժամանակ Ա. Վեգները աշխատում էր Թուրքիայում՝ գերմանական ռազմական առաքելության սանիտարական ծառայությունում: 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին շրջագայում է գրեթե ամբողջ Փոքր Ասիայում, լինում նաև Հալեպում, Բաղդադում, Դեր-զորում (արաբերեն՝ Դեր-էզ-զոր), ականատես է դառնում արևմտահայության տեղահանությանն ու ցեղասպանությանը: Այնուհետև աշխատելով ֆելդմարշալ ֆոն դեր Գոլցի շտաբում՝ տեսնում է անապատներ տեղահանված հայերի հանդեպ կատարվող ոճրագործությունները: Հանդիպում ու զրուցում է բազմաթիվ հայերի և թուրքերի հետ, որոնց հաղորդած զարհուրելի փաստերը օգտագործում է իր մի շարք հրապարակումներում:

Ականատես լինելով մահվան ճամբարներում երիտթուրքերի կազմակերպած՝ հայերի բարբարոսական խոշտանգումներին՝ Ա. Վեգները լուսանկարում է այդ եղերական տեսարանները՝ դրանք որպես հավաստի վավերագրեր պատմության դատաստանին հանձնելու համար: Թուրքական իշխանությունները բռնագրավում են նրա ավելի քան 2000-ի հասնող լուսանկարների մեծ մասը. Ա. Վեգներին հաջողվում է փրկել որոշ հատվածներ և ցուցադրել Գերմանիայում՝ իր հրապարակային ելույթներում և հասարակական վայրերում: Հայոց Մեծ եղեռնի մասին գրում ու հրապարակում է մի շարք պատմվածքներ ու բազմաթիվ հոդվածներ:

Նրա կյանքի հուզիչ իրադարձություններից էր Հայաստան կատարած այցը: Մինչև Հայաստան գալը՝ 1927-ին, Վեգները և նրա կինը՝ Լոլա Լանդաուն, որպես առաջադեմ գրողներ հրավիրվում են Մոսկվա՝ մասնակցելու Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի տոնակատարությանը: Նույն թվականին Ս. Տեր-Գաբրիելյանի հրավերով ժամանում է Երևան:

Հայաստան կատարած իր առաջին այցելության մասին նա հակիրճ գրել է. «Եկա Հայաստան ականատես լինելու մի ժողովրդի հարությանը, այո, հարությանը: Տեսա, թե ինչպես ժողովուրդը, իր դագաղի կափարիչը բանալով, դուրս է եկել գերեզմանից, բզկտված հագուստներով ու նվազած ուժով, սակայն մաքառում է երկիր ստեղծելու համար: Ես տեսա հարության հրաշքը իր ամբողջ շքեղությամբ: Կարծես սա այն Հայաստանը չէ, նոր, բոլորովին նոր երկիր, իր նոր մայրաքաղաքով»[1]:

Վերադառնալով հայրենիք՝ Վեգները դժվարին ու ծանր ժամանակներ ապրեց: 1933 թ. օգոստոսին նրան ձերբակալում է գեստապոն: Պատճառը Հիտլերի դեմ բուռն զայրույթով գրած «Բաց նամակն» էր: Դրանում մատնանշվում էր, որ եթե վերջ չտրվի հակահրեական հալածանքներին, կպղծվի գերմանական մշակույթը, որի զարգացմանը նպաստել են հրեա գիտնականները, գրողները, արվեստագետներն ու փիլիսոփաները: Նա սարսափելի տանջանքների ու խոշտանգումների է ենթարկվում, բանտից բանտ, ճամբարից ճամբար ընկնում: Դիմելով փախուստի՝ հայտնվում է Անգլիայում, ապա մեկնում Շվեյցարիա, Մերձավոր Արևելք և վերջապես հան- գըրվանում է Իտալիայում ու մինչև իր կյանքի վերջն ապրում և ստեղծագործում Հռոմում:

Մեծ մարդասերը Հայաստանում էր նաև 1968 թ. սեպտեմբերին: Իր կնոջ՝ Իրենե Կովալսկայի հետ նա 82 տարեկան հասակում այցելեց 2750-ամյա Երևան: Վերհիշելով և պատմելով Հայոց ցեղասպանության՝ դարի առաջին մեծ ողբերգության մասին, Վեգները մանկան հրճվանք էր ապրում՝ տեսնելով հնադարյան Երևանի նորակառույց- ները, գիտական ու մշակութային հիմնարկները: Նրան ընդունեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը և հայանպաստ մեծ գործունեության համար պարգևատրեց Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով:

Ա. Վեգները բարձրացավ Ծիծեռնակաբերդ և Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին ծաղկեպսակ դրեց: Այցելեց Մատենադարան, դասախոսություններ կարդաց Արտասահմանի հետ մշակութային կապի և բարեկամության հայկական ընկերության դահլիճում, ցուցադրեց հայերի կոտորածները պատկերող մի շարք լու- սանկարներ:

Ա. Վեգները 1968 թ. սեպտեմբերի 20-ին հանդիպում ունեցավ Երևանի պետական համալսարանի կոլեկտիվի հետ: Ահա թե ինչ է գրում այդ հանդիպման մասին «Երևանի համալսարան» թերթը. «Մթագնում էր նրա դեմքը, երբ խոսում էր հայկական կոտորածներից ու հրճվում էր, որ իր առաջ ծփում, ծավալվում էր նոր Երևանը, ուր խայտում է կյանքը: Նա պատմեց, թե ինչպես գերմանական իշխանությունները ձերբակալել են իրեն, որպեսզի խեղդեն՝ հանուն հայերի, հանուն արդարության իր զորեղ ձայնը»[2]:

---

[1] *Արմին Վեգների ձայնը, Լրաբեր (ԱՄՆ), 31.I.1970:*

[2] *Երևանի համալսարան, 27.IX.1968:*

Հանդիպման ժամանակ երախտագիտության խոսք է ասել ակադեմիկոս Կ. Մելիք-Օհանջանյանը. «Սիրելի Վեգներ, հայ ժողովուրդը երախտապարտ է Ձեզ: Ձեր նկատմամբ տածած հարգանքն էր, որ նա այդքան ջերմորեն ընդունեց Ձեզ: Հայերը սիրում են, երբ իրենց երկիր են գալիս բարեկամները: Իսկ Դուք, մեծապատիվ Արմին, հայության վշտի հետ ապրեցիք տասնյակ տարիներ և դարձաք մեր փորձված բարեկամը: Շնորհակալություն Ձեզ, հայության դատի անխոնջ ու անկաշառ պաշտպան, մեզ համար չհնացած բարեկամ, մեզ համար հայացած Արմեն Վեգներ»[3]:

Հայաստան կատարած վերջին այցի կապակցությամբ Ա. Վեգներն ասել է. «Ես, որ տեսել եմ այս ժողովրդի ջարդերը, ես, որ ձայնս բարձրացրել եմ հանուն այս ժողովրդի և տեսնելով աշխարհի քար սրտի պապանձվելը, անիծում էի ամբողջ աշխարհին, եկա, տեսա վերածնված հայ ժողովրդին, բարձրացա Ծիծեռնակաբերդ, ծնկի եկա անգերեզման հայերի հավիտենական կոթողի առջև ու խոնարհվեցի նահատակների հոգին խորհրդանշող անմար կրակի առջև:

Տողանցեցին, տողանցեցին աչքերիս առաջ անապատի ճամբարները, անապատի վրանները, անապատի սովահար մանուկները, համաճարակի զոհերը: Քչերը կարող են հասկանալ իմ ապրումները: Միայն նրանք կարող են չափել այս հրաշքի մեծությունը, որոնց, ինչպես և իմ աչքերում, դրոշմված են անապատի քստմնեցնող պատկերները: Այս Երևանի արժեքը և իմաստը կըմբռնեն նրանք, ովքեր անցել են Դեր զորի և Մեսքենեի անապատներով:

Այստեղ հայությունը փրկված է վերջնականապես, մեկընդմիշտ: Երբ դիմացն Արարատն է և Ծիծեռնակաբերդի վրա անցյալը հիշեցնող մշտավառ բոցը, հայն այստեղ է և իր ճակատագրի տերն է»[4]:

Խոսքի վերջում Ա. Վեգներն անդրադառնում է սփյուռքահայության պահպանման հրատապ խնդրին, կոչ անում «փրկել Արևմուտքի մեջ հետզհետե ձուլվող հայության բեկորները...»[5]:

Ա. Վեգների փաստագրական հարուստ ժառանգության մեջ մեծ տեղ են գրավում նրա վկայությունները Հայոց ցեղասպանության մասին: Դրանց պատմագրական արժեքն ամենից առաջ այն է, որ հեղինակը կենդանի վկա է եղել արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների կատարած ոճրագործությունների, տեսել է մեծագույն ողբերգությունը՝ հայերի ցեղասպանությունը, և իր անաչառ գրչին է հանձնել պատմության համար մեծ դաս հանդիսացող մի շարք աշխատություններ:

Որպես հայերի ցեղասպանության ականատես՝ Ա. Վեգները 1919 թ. հունվարին գրում և ԱՄՆ պրեզիդենտ Վ. Վիլսոնին ուղղում է բաց նամակ, որը, փաստորեն, արևմտահայության տեղահանության ու ցեղասպանության համառոտ պատմությունն է: Այդ փաստաթղթում նա գրում է. «Թուրքական կառավարությունը 1915 թվականի գարնանը ձեռնամուխ եղավ երկու միլիոն հայերին

---

[3] *Նույն տեղում:*

[4] *Արմին Վեգների ձայնը, Լրաբեր (ԱՄՆ), 31.I.1970:*

[5] *Նույն տեղում:*

երկրի երեսից բնաջնջելու իր հրեշավոր ծրագրի իրագործմանը... հայերը նահատակվում էին ամեն տեսակի երկրային մահերով, բոլոր ժամանակների մահերով»[6]:

Այս նամակը հայերի ցեղասպանության ամենազորեղ վկայություններից է և միաժամանակ ցույց է տալիս Հայկական հարցի լուծման արդարացի ուղին: Թե ինչ գործեր է գրել, ինչ վկայություններ է ներկայացրել Արմին Վեգները հայերի տեղահանության ու ցեղասպանության մասին, շարադրել է նաև պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանին ուղարկած նամակում: Նա նշում է. «Հիշողությամբ թվարկում եմ իմ հետևյալ տպագիր և ձեռագիր փաստաթղթերը:

1. Հայ ժողովրդի տեղահանության վերաբերյալ 1919 թ. ԱՄՆ նախագահին ուղարկած իմ բաց նամակը, ես այն գրել եմ որպես կենդանի վկա անապատներ տեղահանված հայ ժողովրդի տառապանքների, այն բոլորի, ինչը անձամբ տեսել եմ սիրիական անապատներում: «Բեռլինյան օրաթերթում» հրապարակված այդ նամակը Փարիզյան բանակցությունների ժամանակ պետք է անձամբ հանձնեի ամերիկյան նախագահին: Դրանից հետո այն լույս տեսավ գերմաներեն:

2. «Ճիչ Արարատից», հրատարակել է պացիֆիստ Հելեն Շտյոկերը 1922 թ. «Նոր սերունդ» ամսագրում:

3. «Կրակե գունդ» վերնագրով իմ հոդվածը, որը սկսվում է հետևյալ բառերով. «Երբ հետ ես նայում, ամեն ինչ վերակենդանանում է»: Այնտեղ նկարագրված են իմ ապրումները հայերի նկատմամբ Աբդուլ Համիդի կատարած ոճրագործությունների ժամանակ: 1895-1896 թթ. այնպիսի տպավորություն են գործել ինձ վրա, որ երբեք չեմ մոռանա:

4. «Հինգ մատներ քո վրա», գրված 1928 թ.: Այն լույս է տեսել Շտուտգարտում 1929 կամ 1930 թվականին: Այնտեղ նկարագրված են 1927-1928 թթ. ձմռանը Հայաստան կատարած իմ այցելությունները: Բացահայտված են Գերմանիայի կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվելու իմ դրդապատճառները:

5. «Թալեաթ փաշայի դատավարության» առաջաբանը, որը լույս է տեսել 1921 թ. «Քաղաքականություն և պատմություն» գերմանական հրատարակչական ընկերության կողմից: Այնտեղ պատկերված է հայկական ջարդերի ամենամեծ կազմակերպչի՝ Թալեաթ փաշայի դատավարությունը, որտեղ նրան սպանողին գերմանական դատարանն արդարացրեց:

6. «Վրան», լույս է տեսել 1926 թ.: Դրա մեջ մտնում է նաև «Բանկիր» պատմվածքը:

7. «Պատանի Հուսեյնը» (նովելներ Թուրքիայի մասին): Այդ շարքում, «Բանկիրից» բացի, կա նաև մի հիանալի պատմվածք երիտասարդ հայուհի մոր ճակատագրի մասին: «Ներխուժում կանանց

---

[6] Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ պարոն Վուդրո Վիլսոնին՝ հայ ժողովրդին անապատ տեղահանելու մասին, 1919 թվականի հունվար, Բեռլին, Արմին Վեգները և Էրնստ Վերները հայոց ցեղասպանության մասին, Ե., 1996, էջ 23: Նամակի թարգմանությունը գերմաներենից հայերեն՝ Ս. Ստեփանյանի:

բաղնիք», լույս է տեսել «Բեռլինյան օրաթերթում» 20-ական թթ. սկզբին, իսկ 1921 թ.՝ առանձին գրքով:

8. Վերը նշված պատմվածքը, զինվորի ճակատագրի մասին գրված նովելի հետ, ռուսերեն լույս է տեսել Մոսկվայում 1920-ական թթ.:

9. «Հայ մորը» պատմվածքը շատ կարևոր գործ է տարաբախտ մոր ճակատագրի մասին: Հայերեն թարգմանել է Պ. Միքայելյանը, նրա թարգմանությամբ այն լույս է տեսել նաև ռուսերեն 1956 թ. (Երևանում):

10. «Բարի լույսը» հոդվածը նվիրված է հայ ժողովրդի վերածննդի 50-ամյակին: Գրել եմ 1965 թ.: Լույս է տեսել հայկական մամուլում: Այն պարունակում է Բեյրութում իմ կատարած մի շարք լուսանկարներ: Արևմտագերմանական թերթերը հրաժարվեցին տը-պագրելուց, ուստի այն հրապարակվեց շվեյցարական «Աշխարհի շաբաթ» հանդեսում 1966 թ.:

Իմ մասին շատ կարևոր հոդված կարող եք գտնել պրոֆեսոր Ալբերտ Զյորգելի գրականության պատմության շարքից «Ժամանակի պոեզիան ու պոետները» գրքում: Լույս է տեսել 1925 թ. Լայպցիգում»[7]:

Հայերի ցեղասպանության մասին սեփական վկայությունների հիման վրա Ա. Վեգների գրած աշխատություններից բերում ենք մի քանի հատվածներ ու մտորումներ:

Մեծ եղեռնի մասին հուզիչ վկայություն է «Հայ մորը» գործը: Դիմելով թուրքական հայասպանների ճիրաններում հայտնված հայ մորը՝ հեղինակը գրում է. «Դու ինձ չէիր տեսնում, երբ ես, մեկուսի կանգնած, քեզ էի նայում: Լուռ դիտում էի, թե երեխաներիդ ինչպես ես քնեցնում լիալուսնի ցոլքի տակ, չոր, փոշոտ գետնին: Ահա դստրիկիդ պառկեցրիր փոքրիկ որդուդ կողքին, ծածկեցիր չթե ծաղկանախշ վերմակով, ինչպես ամեն գիշեր այն օրից ի վեր, երբ ստիպեցին բռնել տարագրության ճանապարհը:

Ինչ խոր ընկճվածություն էր հառնում քնած երեխաների փոքրիկ ձեռքերից: Դրանք վերմակի վրա հանգչում էին կուչ եկած տերևների պես, սարսռում էին աղոտ լույսի տակ: Ինքդ էլ կծկվեցիր չոր գետնին, ցանուցիր թափած իրերի կողքին: Աչքերդ հոգնածությունից փակվում էին, սակայն միտքդ այդ պահին դեգերում էր հեռու հեռվում պապենական հարկի ներքո, որտեղ արդեն տիրում էին քամին ու ամայությունը: Մտաբերում էիր այն ամենը, ինչ մոտ ու սիրելի էր քեզ: Հիշում էիր ամուսնուդ, որին օրը ցերեկով պատի տակ սպանեցին, հիշում էիր տաք անկողինդ, տան փայտե մաշված հա-տակը, որը երգաձայն ճռնչում էր ճոճվող օրորոցի ծանրությունից, ցնցվում ներս ու դուրս վազող երեխաներիդ քայլերի տակ...

Դու մեկն էիր այն հազարավոր հայերից, որոնցով լցված էր ամբողջ հարթավայրը: Ծուխ էին արձակում տարագիրների խղճուկ վրանները, և թվում էր, թե դաշտից ամպի պես ճահճատենդի գոլոր-

[7] *Ս. Ստեփանյանի նամակը Ա. Վեգներին և նրա պատասխանը պահպանվում են Մարբախի արխիվում:*

շի էր բարձրանում: Դու ծվարել էիր թշվառության ճամբարում բերանքսիվայր փռված տղամարդկանց կողքին, որոնք այնպես ծանր էին շնչում, կարծես վազելով լեռ էին բարձրացել կանանց հետ, որոնց երկար ու խռիվ մազերը տրորվում էին անցնող-դարձողների ոտքերի տակ: Այդ մարդկանց հոգիները սավառնում էին հարազատ վայրերում, մինչդեռ քնի մեջ խորասուզված նրանց մարմինները երազում շարունակում էին իրենց գաղթը, քարշ գալիս դեպի անհայտ հեռուները…»[8]:

Հայերի ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, վկայություններ ու գիտահետազոտական աշխատություններ են հրապարակվել աշխարհի տարբեր լեզուներով, սակայն դրանց կողքին անգնահատելի են 1921 թ. հունիսին կայացած բեռլինյան հանրահայտ դատավարության սղագրություններն ու դրանց հետ կապված փաստագրական նյութերը:

1921 թ. հունիսի 2-3-ին Բեռլինում տեղի ունեցած Ս. Թեհլիրյանի հայտնի դատավարության ժամանակ Ա. Վեգները հանդես եկավ որպես վկա և երդվյալ ատենակալներին առաջարկեց ցուցադրել հայկական կոտորածների ու տեղահանության իր լուսանկարած ողբերգական պատկերները: Բացի դրանից, հայերի ցեղասպանության վերաբերյալ Ա. Վեգների վկայությունները համառոտ ու պատկերավոր շարադրված են 1921 թ. հրատարակված «Թալեաթ փաշայի դատավարությունը» սղագրության առաջաբանում: Այնտեղ նա նշել է. «Հայ ժողովրդի ողբերգությունն աննախադեպ իրադարձություն էր այդ պատերազմում և թերես մարդկության ամբողջ պատմության մեջ: Կատարված հանցագործությունը այնքան հրեշավոր էր, որ նրբա արձագանքները ցնցեցին մարդկանց նույնիսկ պատերազմի ժամանակներում ու տարածվեցին բոլոր երկրներում... Եվ ահա հայ անհայտ ուսանողի ատրճանակի կրակոցը, որը սպանեց Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարարին, և դրա հետ կապված դատավարությունը ամբողջ աշխարհի ու նաև գերմանական ժողովրդի ուշադրությունը սևեռեցին Համաշխարհային պատերազմի ամենաարյունալի էջին, ակնհայտ դարձավ ճշմարտությունը՝ երիտթուրքական կառավարության կողմից մի ամբողջ ժողովրդի ծրագրավորված բնաջնջումը: Իրադարձությունների զարմանալի հորձանուտում տեղի ունեցավ այն, որ փաստերի ծանրության տակ տառապող ու լռակյաց զոհը ակամայից դարձավ մեղադրող, ու մեղադրյալի աթոռին այլևս չկա Սողոմոն Թեհլիրյան, այլ կա արյունաշաղախ ննջեցյալի ստվերը, խորհրդավոր իրավիճակի այնպիսի խորիմաստ հաստատում, երբ մեղավորը ոչ թե սպանողն է, այլ սպանվածը»[9]:

Ա. Վեգները հավաստի փաստերով ցույց է տվել, որ երիտթուրք ոճրագործների կազմակերպած և իրագործած ցեղասպանության հետևանքն այն եղավ, որ բնաջնջվեց այն ժամանակվա հայ «ժողովրդի շուրջ կեսը, որը կարծես թե բարձրանում էր գերեզմանից և մոխրա-

---

[8] *Արեգակ, Լոնդոն, ապրիլ, 1965, էջ 23-24:*

[9] *Der Prozeß Talaat Pascha Stenographischer Prozeßbericht mit einem Vorwort Armin T. Wegner und einem Anhang, Berlin, 1921, S. VII.*

ցած ձեռքերը կարկառում պատերազմի սարսափների, դահճի դաժանությունների դեմ ու դատարանի ամբիոնից մի անգամ ևս ի լուր աշխարհի բարձրաձայնում էր աննկարագրելի ողբերգության մասին»[10]:

Ներկայանալով Բեռլինյան դատավարություն որպես հայերի ցեղասպանության և թուրքական ոճրագործությունների ականատես ու վկա՝ Ա. Վեգները մատնանշել է, որ իր վկայությունները, ինչպիսիք ու որքան էլ լինեն, միայն մասնիկները կարող են կազմել տեղի ունեցած աննախադեպ իրողության: Բնութագրելով Բեռլինյան դատավարությունը՝ Ա. Վեգները այն կարծիքն է հայտնել, որ իր առանձնահատկությամբ և որ գլխավորն է՝ ընդունած արդարացի վճռով այն համաշխարհային պատմական նշանակություն ունի. «Թալեաթի հանցագործությունն այնքան սարսափելի էր, որ սպանողի արարքը, որի համար, որպես արյան վրեժ, բռնության գործողություն, մենք բնականորեն մերժում ու ափսոսում ենք, այդուհանդերձ, մեզ թվում է փրկության միջոց, որով խիզախ էակը սեփական ուժերով ազատագրում է ինքն իրեն: Այո, ես այն կարծիքին եմ... որ դա պատմության կամքն էր, երբ զոհերից մեկի ձեռքով սպանվեց Թալեաթը»[11]: Ա. Վեգների պատկերավոր խոսքերով՝ «Ինքը՝ Սողոմոն Թեհլիրյանը, միայն խորհրդանիշ էր, մի հյուլե, որի մեջ խտացված ու ցայտուն արտահայտված էին հայ ժողովրդի վերքերը, նրա ազգային ցավը, խիզախ ինքնապաշտպանությամբ հաստատված նրա արդարացի տենչը»[12]:

Եվ ահա հյուլեն պայթեց, ու դատավարությունների համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ մեղադրյալի դերում սպանվածն էր, իսկ գլխավոր մեղադրողը սպանողն էր: Եվ, բնականորեն, այդ արդարացի դատը պատմության մեջ մտավ որպես ոչ թե Ս. Թեհլիրյանի, այլ Թալեաթ փաշայի դատավարություն:

Ա. Վեգներն իր ուսումնասիրությունների ու քաղաքագիտական վերլուծությունների հիման վրա այն հետևությանն է հանգել, որ հայերի ցեղասպանությունը վաղօրոք ծրագրված էր «Իթթիհատ վե թերաքքը» կազմակերպության կողմից: Այդ հրեշավոր ծրագիրը իրագործեց գործադիր իշխանությունը, որի գլխավոր դեմքը ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան էր: Ա. Վեգները հաստատակամորեն մերկացնում է թուրքական իշխանությունների բոլոր տեսակի պատճառաբանությունները հայերի տեղահանության և ցեղասպանության հարցում: Նա հատկապես բացահայտորեն անհիմն է համարում «ռազմական անհրաժեշտությամբ» հայերի տեղահանության վարկածը. «Ինչպե՞ս բացատրել արևմտաանատոլիական վիլայեթներից հայ բնակչության բռնի տեղահանությունը, որտեղ հայերի հույժ փոքրամասնությունը որևէ վտանգ չէր կարող ներկայացնել, չէ՞ որ նրանք ապրում ու աշխատում էին ռազմական գործողություններից հարյուրավոր մղոններ հեռու: Մի՞թե հայտնի չէ ամե-

[10] *Նույն տեղում, էջ VII:*
[11] *Նույն տեղում, էջ VIII:*
[12] *Նույն տեղում:*

րիկյան դեսպան Մորգենթաուի առաջարկությունը տեղահանվող հայերին Ամերիկա վերաբնակեցնելու մասին: Հայտնի է նաև այն փաստը, որ թուրքական կառավարությունը ոչ միայն մերժեց այդ առաջարկությունը, այլև դրանով հաստատեց, որ այսպես կոչված ռազմական անհրաժեշտությամբ պայմանավորված այդ միջոցառումը միայն պատրվակ էր, որպեսզի քողարկվեր դարի հանցագործությունը՝ աշխատասեր ու բարձր մշակույթի տեր մի ամբողջ ժողովրդի լրիվ ոչնչացումը»[13]:

Ա. Վեգները 1922 թ. հրապարակում է «Ճիչ Արարատից» գրքույկը, որտեղ կրկին դատապարտելով ու անարգանքի սյունին գամելով հայերի ցեղասպանության կազմակերպիչներին՝ միաժամանակ խարազանում է արևմտյան տերությունների հանցավոր անտարբերությունը, արդարացիորեն և իրեն յուրահատուկ պատկերավորությամբ մերկացնում է նրանց քաղաքական ու դիվանագիտական խարդավանքները: Նա ի լուր աշխարհի գրել է. «Ի՞նչ արեցին Արևմուտքի հաղթանակած տերություններն իր հավատի ու ոգու համար տանջահարված այդ փոքր ժողովրդին լիակատար բնաջնջումից պաշտպանելու գործում: Թույլ տվեք Ձեզ, այդ պետությունների ղեկավարներիդ, հիշեցնել Ձեր հանդիսավոր հավաստիացումներն ու երաշխիքները, որոնք պատերազմի ժամանակ խոստացել էիք Հայաստանին: Թույլ տվեք մի անգամ ևս հիշեցնել Ձեզ և ողջ աշխարհին Ֆրանսիայի Նախարարների խորհրդի նախագահ Կլեմանսոյի 1918 թ. հուլիսի 14-ին Հայաստանին ուղղված խոսքերն այն մասին, որ մարդկության և արդարության օրենքների հիման վրա դաշնակից պետությունները մշտապես իրենց պարտքն են համարում հոգ տանել այդ երկրի ճակատագրի համար: Մի՞թե չեն լսվում, հիշողությունից այդպես արագորեն ջնջվում են Պուանկարեի մեծադղորդ այն խոսքերը, որոնցով նա դիմեց Կիլիկիայում կաթոլիկ հայերի պատրիարքին: Լլոյդ Ջորջը, Ռոբերտ Մեսիլը չհապաղեցին հետևել նրա օրինակին, և նրանցից յուրաքանչյուրը որքան կոչեր են ստորագրել հանուն Հայաստանի ազատության:

Բրիա՛ն, Դեշանե՛լ, Օռլա՛նդո, Սոնի՛նյո, Վի՛լսոն, այնքան շատ են մեծահամբավ անունները, որոնք շքերթի պաշտոնական համազգեստների նման անցնում են մեր կողքով՝ իրենց հետևից թողնելով հիասթափության դատարկ հռհռոցի արձագանքը:

Ի՞նչ եղավ միմյանց հաջորդած այդ հանդիսավոր երդումների արդյունքը. գուցե խաչակրաց սրբազան արշավանքի հռչակո՞ւմ: Նոր թալան, սով ու կոտորած»[14]:

Այնուհետև Ա. Վեգները ցույց է տվել, որ պատերազմի ժամանակվա արյունալի իրադարձություններին հաջորդեցին հալածանքները Ղարաքիլիսայում, Ալեքսանդրապոլում, 1921 թ. Փամբակի, Սամսունի ոճրագործությունները, 1922 թ. վերջին կոտորածներն ու բռնի տեղահանությունները Անկարայի շրջանում: Այդ հրապարակման մեջ նա հատուկ տեղ է հատկացնում Զմյուռնիայի ողբերգու-

---

[13] *Նույն տեղում:*

[14] **Wegner A.** *Der Schrei vom Ararat, Leipzig, 1922, S. 2-3.*

թյանը: Հարկ է ասել, որ Զմյուռնիայում (Իզմիրում) հայերն ապրել են ավելի քան ութ դար: Նրանք հիմնականում բնակվում էին քաղաքի Հայնոց, Գետեզերք ու Քարափ թաղամասերում և ունեին չորս եկեղեցի ու մեկ ազգային հիվանդանոց: Նրանք զգալի դեր ունեին քաղաքի տնտեսական ու սոցիալական կյանքում: Աշխարհին հայտնի էին Զմյուռնիայի հայ արհեստավորները՝ ոսկերիչները, չթագործները, ժամագործները, մետաքսագործները, վաճառականները, իսկ քաղաքի շրջակա գյուղերի հայ բնակիչները զբաղվում էին այգեգործությամբ: Զմյուռնիան հայ մշակույթի կարևոր կենտրոններից մեկն էր: XIX դ. կեսերին այնտեղ տպագրվել են բազմաթիվ գրքեր ու պարբերականներ: Համազգային համբավ էին վայելում Մեսրոպյան վարժարանը, այլ դպրոցներ, մամուլը, գրատպությունը, մշակութային ընկերությունները և հայ թատրոնը: Զմյուռնիա քաղաքում միայն 1915 թ. ապրում էին ավելի քան 30 հազար հայեր: Օգտագործելով 1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմը՝ թուրքական իշխանություններն ամբողջովին ցեղասպանության ենթարկեցին Զմյուռնիայի և նրա շրջակա բնակավայրերի հայ և հույն բնակչությանը: Արդեն 1922 թ. սեպտեմբերից այդ տարածքում ոչ մի հայ չմնաց:

Ա. Վեգները մատնանշել է, որ թուրք բարբարոսներն իսպառ այրեցին դարերի ընթացքում հույների ու հայերի կառուցած այդ գեղեցիկ քաղաքը՝ վերածելով այն մոխրակույտի: Նկարագրելով Զմյուռնիայի հայության կոտորածները, նրանց ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ոչնչացումը՝ Ա. Վեգները հանգում է հետևյալ հետևության. «Հայերի թշնամիները նաև մարդկության թշնամիներն են»[15]:

Դիմելով արևմտյան տերությունների ղեկավարներին՝ նա գրում է. «Ինչպե՞ս կարելի է ապացուցել այն մարդկանց մեղքը, որոնց սպանել են, կախաղան բարձրացրել, բանտերում տանջամահ արել: Ծծկեր երեխաները և նրանց մայրերը մեղավոր չեն, մեղավոր է նրանց արյունը»[16]:

Պատկերելով Զմյուռնիայի հայության սարսափելի կոտորածները՝ նա շարունակում է. «Մենք տեսնում էինք խեղդվողներով լեփ-լեցուն ծովը. փրկության զուր հույսով մարդիկ լողում էին դեպի նավերը, սակայն ալեկոծությունը ափ էր նետում նրանց փայտացած մարմինները: Հրդեհի ծխի մեջ թաղված գիշերը ոռնում էր սարսափից, այրվող տներից դուրս էին բերում տղամարդկանց, կանանց և երեխաների, որպեսզի հանձնեին գնդացիրների պատրաստի կրակին: Նահատակվողների ճիչը խավարի միջից կարծես թե հասնում էր եվրոպական գիշերվա անդորրին, և այդ ամենը զուգակցվում էր խոր լռությամբ, որն ավելի սարսափելի էր, քան դրան նախորդած ճիչը:

Երբ այս ամենը կատարվում էր եվրոպական պետությունների նավերի ներկայությամբ, նրանց զորքերի աչքի առջև, ապա ի՞նչ էր տեղի ունենում երկրի խորքում: Ո՞ւր էին քշում մարդկանց անհա-

[15] *Նույն տեղում, էջ 3:*
[16] *Նույն տեղում, էջ 4:*

մար խմբերը: Լեռների կիրճեր կամ փողոցներում պարտադիր աշխատանք կատարելու, սակայն նրանք զրկված էին ծածկի տակ մնալու իրավունքից և ոչ մի սնունդ չէին ստանում: Այդ պայմաններում նրանք մահանում էին սովից ու հիվանդություններից»[17]:

Մերկացնելով եվրոպական պետությունների մեղսակցությունը հայերի ցեղասպանության մեջ՝ Ա. Վեգները գրում է. «Դա Եվրոպան է, որը մշտապես ձգտում է մի անարդարությունը փոխարինել մյուսով և չի թաքցնում իր ուրախությունը այնպիսի հաջողության առթիվ, որը ձեռք է բերվել տասնյակհազարավոր անմեղ կանանց ու երեխաների արյան գնով, Եվրոպան, որը գերադասում է վաշխառուական առևտուր անել նրանց տանջամահ անողների հետ, քան փրկել հալածված մարդկային ցեղի բեկորները կործանումից:

…Ֆրանսիան, որը գրավել էր Կիլիկիան միայն այն բանի համար, որ նրան դուր էին գալիս տարածքի բերքառատ հարթավայրերն ու բամբակը, Անգորայի հետ կնքած պայմանագրով հանձնեց Թուրքիային՝ նավթի կամ այլ օգուտներ քաղելու համար: Եվ ի՞նչ, 150 հազար հայեր, հավատալով ֆրանսիական հանրապետության խոստումներին, վերադարձան իրենց հայրենի օջախները, սակայն վերստին հանձնվեցին նախկին հալածողներին»[18]:

Այդ ազդու փաստաթղթում, ի լուր աշխարհի, Ա. Վեգները հայտարարում էր. «Ո՛չ նավթ, ո՛չ բամբակ, այլ մարդ: Մի՞թե նույն Ֆրանսիան չի հավաստել ամբողջ աշխարհին, որ արշավանք է ձեռնարկել փոքր ժողովուրդների իրավունքները պաշտպանելու համար: Որտե՞ղ է փոքր ժողովուրդների ազատությունը: Մի՞թե Ֆրանսիան չէր զենք տրամադրում Թուրքիային, որն էլ կրակում էր Հայաստանի սրտին...»[19]:

Դիմելով Արևմուտքի երկրների կառավարողներին՝ Ա. Վեգները հիշեցնում է, որ գտնվելով արևելյան բարբարոս հորդաների շրջապատում, Հայաստանը վաղնջական ժամանակներից մեծ ազդեցություն է գործել Արևմուտքի մշակույթի վրա, կամրջի դեր կատարել Մերձավոր Արևելքի և Եվրոպայի միջև: Նա մեղադրում է եվրոպական կառավարողներին, որոնց թողտվությամբ Հայաստանը անապատի վերածվեց, նրա բնակիչները ցեղասպանության ենթարկվեցին, իսկ հրաշքով փրկվածները որպես տարագիրներ հայտնվեցին օտար երկնքի տակ»[20]:

Արմին Վեգները իր մահկանացուն կնքեց 1978 թ. մայիսի 17-ին Հռոմում, 92 տարեկան հասակում:

Մեծ մարդասերի, հայապաշտպան գործչի արդարացի, հզոր ձայնը առաջադեմ մարդկության ձայնն է:

---

[17] *Նույն տեղում, էջ 5:*
[18] *Նույն տեղում, էջ 6:*
[19] *Նույն տեղում:*
[20] *Նույն տեղում:*

АРМИН ВЕГНЕР КАК ВЕЛИКИЙ ГУМАНИСТ И ОЧЕВИДЕЦ ГЕНОЦИДА АРМЯН

СТЕПАНЯН С. С.

Резюме

Известный немецкий писатель, публицист, доктор юридических наук, великий гуманист Армин Теофил Вегнер в период Первой мировой войны, будучи сотрудником санитарной службы германской военной миссии, в июле-августе 1915 года стал очевидцем депортации и Геноцида армян. Затем, работая в штабе фельдмаршала фон дер Гольда, оказался также свидетелем злодеяний в отношении армян, изгнанных с родных мест в пустыни. В связи с этим в “открытом письме” президенту США Вудро Вильсону он писал: “Когда турецкое правительство весной 1915 года приступило к осуществлению своего чудовищного плана – стереть с лица земли два миллиона армян… никто не помешал мрачным тиранам Турции подвергнуть армян тем мучительным истязаниям, которые могут сравниться лишь с действиями обезумевшего преступника. Так они погнали весь народ – мужчин, женщин, стариков, детей, беременных матерей, грудных младенцев в Аравийскую пустыню с единственной целью – обречь всех на голодную смерть”.

Армин Вегнер опубликовал ряд документальных свидетельств, сфотографировал сцены ужасающих эпизодов резни и депортации, хранящиеся в архивах и библиотеках.

Большой интерес вызывает его публикация “Крик с Арарата”, где осуждая варварские действия организаторов Геноцида армян, Вегнер в то же время обвиняет западные державы в преступном безразличии, а также в политических и дипломатических махинациях.